Հայաստանում անցկացվել է ճապոնական ֆիլմերի 15-րդ փառատոնը

2022 թվականի փետրվարի 3-ից 28-ը (ընդհանուրը՝ 7 օր) Երևանում, Էջմիածնում, Իջևանում և Գյումրիում անցկացվել է ճապոնական ֆիլմերի 15-րդ փառատոնը՝ Հայաստանում Ճապոնիայի դեսպանության, Ճապոնիա հիմնադրամի և «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթամշակութային կենտրոնի համատեղ ջանքերով:

Փառատոնն անցկացվել է Ճապոնիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ՝ 2 տարվա ընդմիջումից հետո: Այս անգամ փառատոնն անցկացվել է 4 քաղաքների 4 դահլիճներում, ցուցադրվել է 6 ֆիլմ, և ֆիլմերը դիտելու է եկել ավելի քան 1000 մարդ:

Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում բացման արարողության ժամանակ ողջույնի խոսքով հանդես է եկել Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորին և «Հիկարի» կենտրոնի նախագահ տիկին Կարինե Փիլիպոսյանը:

Փառատոնը հիանալի հնարավորություն է դարձել ֆիլմերի միջոցով հանդիսատեսին ներկայացնելու Ճապոնիայի մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները և խթանելու ճապոնական մշակույթի նկատմամբ հետաքրքրությունն ու ըմբռնումը:

Դեսպան Ֆուկուշիմայի ողջույնի խոսքը

«Հիկարի» կենտրոնի նախագահ տիկին Կարինե Փիլիպոսյանի ողջույնի խոսքը

Էջմիածնի քաղաքապետ տիկին Գասպարյանի ողջույնի խոսքը

Ֆիլմերի փառատոնն Էջմիածնում

Տավուշի թեմի առաջնորդ եպիսկոպոս Գալստանյանի ողջույնի խոսքը

Ֆիլմերի փառատոնն Իջևանում

Դեսպան Ֆուկուշիման և Գյումրու փառատոնի հյուրերը

Ֆիլմերի փառատոնը Գյումրիում

Ֆիլմերի փառատոնի պաստառը

Բրոշյուրները